

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 815-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) նոր խմբագրությամբ շարադրված (Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունիսի 18-ի N 870-Ն որոշում) կանոնադրության 10-րդ և 11-րդ բաժինների դրույթներին համաձայն՝ Ակադեմիայի անդամների, ինչպես նաև արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրությունների կազմակերպման համար:

2. Սույն կարգով մրցույթը կազմակերպվելու է Ակադեմիայի ասոցացված անդամների (այսուհետ՝ Ասոցացված անդամ), ինչպես նաև արտասահմանյան անդամների ընտրության համար՝ ըստ Ակադեմիայի նախագահության (այսուհետ՝ Նախագահություն) հաստատած գիտատեխնոլոգիական գործունեության մասնագիտությունների թափուր տեղերի ցանկի:

3. Ասոցացված անդամ կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն անձը, ով համապատասխանում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքով, Ակադեմիայի կանոնադրությամբ ու սույն կարգով սահմանված գիտատեխնոլոգիական գործունեության չափանիշներին:

4. Յուրաքանչյուր մասնագիտության գծով Ասոցացված անդամների թափուր տեղերի քանակը սահմանվում է երկու ցուցակով՝

- 1) առանց տարիքային սահմանափակման,
- 2) 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ 51 տարին չլրացած գիտնականների համար (Ասոցացված անդամի թեկնածության համար սույն կարգով սահմանված չափանիշների սանդղակում բաղադրիչների փոփոխված շեմային պայմաններով),
- 3) եթե որևէ մասնագիտության դեպքում հատկացվում է մեկ թափուր տեղ, այն նախատեսվում է առանց տարիքային սահմանափակման ընտրության համար:

5. Ասոցացված անդամների ընտրություններն անցկացվում են երկու փուլով՝
- 1) առաջադրված թեկնածուների երաշխավորում Ակադեմիայի բաժանմունքներում (այսուհետ՝ Բաժանմունք),
 - 2) երաշխավորված թեկնածուների ընտրություն Ակադեմիայի ընդհանուր ժողովում (այսուհետ՝ Ընդհանուր ժողով):
6. Ակադեմիայի արտասահմանյան անդամ կարող է ընտրվել իր գործունեությամբ Հայաստանի հետ կապված, գիտական ակնառու արդյունքներ ունեցող ճանաչված գիտնականը:
7. Մրցույթի շրջանակներում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված հրապարակում (այսուհետ՝ ՄԳՇ հրապարակում) է համարվում Վեբ օֆ Սայնս (Web of Science™) հարթակի հիմնական շտեմարանում (Web of Science Core Collection) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում ընդգրկված հոդվածը (article), ակնարկը (review), նամակը (letter), գիտաժողովի նյութը (Conference Paper, Proceedings Paper) կամ գրքի գլուխը (book chapter): Մենագրությունը պետք է ունենա առնվազն հինգ տպագրական մամուլ ծավալ և որպես գիրք տեսակի փաստաթուղթ (Book) ինդեքսավորված լինի Վեբ օֆ Սայնս (Web of Science™) կամ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում (այսուհետ՝ Մենագրություն):
8. Ընտրություն անցկացնելու մասին Նախագահության հայտարարությունը հրապարակվում է Ակադեմիայի պաշտոնական կայքում: Հայտարարությանը կից հրապարակվում է սույն կարգը և գիտատեխնոլոգիական գործունեության մասնագիտությունների թափուր տեղերի ցանկը:
9. Ընտրությունների հայտարարությունից հետո մասնագիտությունների անվանումների ու թափուր տեղերի թվաքանակի մեջ փոփոխություններ կատարել չի թույլատրվում, բացառությամբ արտակարգ դեպքերի՝ Նախագահության որոշմամբ, ոչ ուշ, քան հայտարարությունից հետո տասն օրվա ընթացքում:

2. ԱՍՈՑԱՅՎԱԾ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Ասոցացված անդամի թեկնածու կարող են առաջադրել՝ համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի իսկական

անդամներն ու թղթակից անդամները, Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները:

11. Գիտական կազմակերպություններում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում Ասոցացված անդամի թեկնածուի առաջադրումը կատարվում է համապատասխան գիտական, ակադեմիական, գիտատեխնիկական խորհուրդների որոշմամբ:

12. Ասոցացված անդամի թեկնածուն կարող է առաջադրվել մեկ Բաժանմունքի շրջանակում (Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք, Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք, Բնական գիտությունների բաժանմունք, Քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունք, Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք), մեկ մասնագիտությամբ՝ թափուր տեղերի ցանկին համապատասխան:

13. Ասոցացված անդամի թափուր տեղի համար կարող է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող այն գիտնականը՝ ով.

1) ունի գիտական աստիճան,

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն 13 տարվա աշխատանքային ստաժ,

3) 2022-2026 թվականներին բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, բժշկական, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով համահեղինակել է առնվազն ութ հրապարակում ՄԳՇ-ում, իսկ հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով՝ առնվազն չորս հրապարակում ՄԳՇ-ում կամ մեկ Մենագրություն,

4) 2022-2026 թվականներին բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, բժշկական, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով հրապարակումներից առնվազն չորսում, իսկ հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով առնվազն երկուսում եղել է որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ,

5) 2022-2026 թվականներին բնական գիտությունների, ճարտարագիտություն և տեխնոլոգիա, բժշկական, գյուղատնտեսական, հասարակական գիտությունների մասնագիտություններով հրապարակումներից առնվազն չորսը, իսկ հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով՝ առնվազն երկուսը ներառված են

Սիմագո Ջրոնըլ էնդ Քանթրի Ռենք (SCImago Journal & Country Rank) պորտալի ամսագրերի դասակարգման (այսուհետ՝ ամսագրերի դասակարգման) առնվազն երկրորդ քառորդում (Q2),

6) 2022-2026 թվականներին հանդիսացել է գիտական աստիճան ստացած առնվազն մեկ անձի ատենախոսության գիտական ղեկավար,

7) առանց տարիքային սահմանափակման թեկնածության դեպքում ղեկավարել կամ համաղեկավարել է ևս երկու պաշտպանած թեկնածուական (PhD) ատենախոսություն: Մեկ ղեկավարած պաշտպանած թեկնածուական ատենախոսությանը համարժեք է համարվում \$ 100,000 ընդհանուր ֆինանսական ծավալի (ոչ ՀՀ պետբյուջեի միջոցներից) գիտական դրամաշնորհ(ներ)ի կամ պայմանագրերի ղեկավարումը,

8) Սկոպուս (Scopus՝ <https://www.scopus.com/freelookup/form/author.uri>) գիտատեղեկատվական հարթակում ունի Հիրշի գործակից (h-index).

ա. Ֆիզիկա և հարակից գիտություններ (1.3. Ֆիզիկա և աստղագիտություն, 2.10. Նանոտեխնոլոգիա), **Կենսաբանական և հարակից գիտություններ** (1.6. Կենսաբանական գիտություններ, 2.8. Էկոլոգիա (կենսաբանական ուղղվածության)) մասնագիտությունների համար՝ առնվազն **h = 20** (51 տարին չլրացած գիտնականների համար՝ **h = 18**),

բ. Քիմիական և հարակից գիտություններ (1.4. Քիմիա, 2.6. Նյութագիտություն, 2.8. Էկոլոգիա (քիմիական ուղղվածության), **Երկրի մասին և հարակից բնապահպանական գիտություններ** (1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ), **Տեխնոլոգիական գիտություններ** (2.9. Կենսատեխնոլոգիա 2.5. Քիմիական տեխնոլոգիաներ, 3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա, 4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա), **Բժշկագիտություն** (3.1. Ընդհանուր բժշկություն, 3.2. Կլինիկական բժշկություն), **Գյուղատնտեսական գիտություններ** (4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն, 4.2. Բուսաբուծություն, 4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն) մասնագիտությունների համար՝ առնվազն **h = 15** (51 տարին չլրացած գիտնականների համար՝ **h = 13**),

գ. Մաթեմատիկա, մեխանիկա, համակարգչային գիտություններ (1.1. Մաթեմատիկա, 1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ (բացի արհեստական բանականությունից), 2.3. Մեխանիկա), **Տեխնիկական գիտություններ** (2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն, 2.2. Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա,

էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ, 2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն, 2.7. Բժշկական սարքաշինություն) մասնագիտությունների համար՝ առնվազն $h = 10$ (51 տարին չըրացած գիտնականների համար՝ $h = 8$),

դ. Հասարակական գիտություններ (5.1. Հոգեբանություն, 5.2. Տնտեսագիտություն և գործարարություն, 5.3. Մանկավարժական գիտություններ, 5.4. Սոցիոլոգիա, 5.5. Իրավունք, 5.6. Քաղաքական գիտություններ, 5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն, 5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն) մասնագիտությունների համար՝ առնվազն $h = 8$ (51 տարին չըրացած գիտնականների համար՝ $h = 6$),

ե. Արհեստական բանականություն (մշակում և կիրառություն) (1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ (արհեստական բանականության ուղղվածություն)), **Հայագիտություն և հումանիտար գիտություններ** (6.1. Պատմություն, հնագիտություն, 6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն, 6.3. Փիլիսոփայություն, էթիկա, 6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն, 6.5. Արվեստագիտություն) մասնագիտությունների համար՝ առնվազն $h = 6$ (51 տարին չըրացած գիտնականների համար՝ $h = 4$):

14. Ակադեմիայի Ասոցացված անդամի թեկնածուի առաջադրման փաստաթղթերի փաթեթը (այսուհետ՝ Հայտ) թեկնածուն կամ նրա լիազորված անձը թղթային և էլեկտրոնային եղանակով առձեռն ներկայացնում է Ակադեմիա:

15. Հայտը պետք է ներառի՝

1) թեկնածուի դիմումը,

2) թեկնածուի առաջադրումը հաստատող փաստաթուղթ(եր)ը,

3) թեկնածուի կենսագրությունը (CV), ներառյալ գիտական աշխատությունների ցանկը, Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական հարթակում Հիրշի գործակիցը (h-index) և հղումը՝ Scopus ID, WOS ID, ORCID ID,

4) թեկնածուի ղեկավարությամբ պաշտպանված ատենախոսությունների սեղմագրերը կամ այլ հիմնավորող փաստաթղթերը,

5) այլ փաստաթղթեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ սույն կարգի Հավելվածի գնահատման համար:

16. Ասոցացված անդամի առաջադրված և գրանցված թեկնածուների ցուցակը՝ ըստ մասնագիտությունների, հրապարակվում է Ակադեմիայի պաշտոնական կայքում:

3. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

17. Ակադեմիայի նախագահի պաշտոնակատարի (այսուհետ՝ Նախագահ) հրամանով Ակադեմիայի ակադեմիկոս քարտուղարին (այսուհետ՝ Ակադեմիկոս քարտուղար) կից ստեղծվում է տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների ներգրավմամբ աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային խումբ), որը ստուգում է սույն կարգով Հայտում պահանջվող բոլոր փաստաթղթերի առկայությունը, առաջադրված թեկնածուի համապատասխանությունը սույն կարգով սահմանված չափանիշներին, ընտրված մասնագիտությանը և ընտրության պայմաններին:

18. Այն դեպքում, երբ հայտարարված մասնագիտությունն առնչվում է տարբեր Բաժանմունքների գործունեության հետ, ապա թեկնածուի այս կամ այն Բաժանմունքում առաջադրվելու որոշումն ընդունում է սույն կարգի 17-րդ կետով ձևավորված աշխատանքային խումբը:

19. Հայտը չի դիտարկվում, եթե չի պարունակում անհրաժեշտ փաստաթղթերը կամ չի բավարարում Ասոցացված անդամի համար սույն կարգով սահմանված բոլոր չափանիշներին:

20. Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերն Ակադեմիկոս քարտուղարն ուղեկցող գրությամբ փոխանցում է համապատասխան Բաժանմունքի ղեկավարին, իսկ Հայտի չդիտարկելու վերաբերյալ տեղեկությունը էլեկտրոնային փոստով տեղեկացնում Ասոցացված անդամի թեկնածուին:

21. Թափուր տեղերի ցանկի հիման վրա, Նախագահի հրամանով Բաժանմունքներին կից ձևավորվում են Հայտերի վերլուծության ու գնահատման մասնագիտական հանձնաժողովներ (այսուհետ՝ Հանձնաժողով):

22. Հանձնաժողովներում կարող են ընդգրկվել տվյալ Բաժանմունքի՝ Ակադեմիայի իսկական և թղթակից անդամները, Ակադեմիայի անդամ չհանդիսացող ոլորտի առաջատար մասնագետները (բացառությամբ Ասոցացված անդամի թեկնածու գրանցված մասնագետների):

23. Հանձնաժողովի աշխատանքները համակարգում է Բաժանմունքի ղեկավարը: Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են Նախագահը, Ակադեմիայի փոխնախագահները, Ակադեմիկոս քարտուղարը:

24. Բաժանմունքի ղեկավարը հրավիրում է Հանձնաժողովի նիստ: Նիստը համարվում է իրավագոր, եթե մասնակցում է Հանձնաժողովի ցուցակային կազմի 2/3-ը:

25. Հանձնաժողովի աշխատանքներն արձանագրվում են Հանձնաժողովի նիստերի արձանագրությամբ, որը ստորագրում են նիստին ներկա բոլոր անդամները: Հանձնաժողովի նիստերը գրանցում է քարտուղարը:

26. Հանձնաժողովը քննարկում և հաստատում է Ասոցացված անդամ թեկնածուների գնահատման հարցաշարը և յուրաքանչյուր հարցի կշիռը:

27. Բաժանմունքի ղեկավարը նիստին ներկայացնում է յուրաքանչյուր թեկնածուի Հայտը:

28. Միևնույն գիտական խմբից մեկից ավելի թեկնածուների ներկայացված լինելու դեպքում դիտարկվում է միայն տվյալ գիտական ուղղությունը հիմնադրած, ղեկավարող կամ համակարգող հավակնորդի թեկնածությունը՝ հաստատված կազմակերպության գիտական խորհրդի կողմից:

29. Թեկնածուի տպագրված աշխատությունների առնվազն 50%-ում համահեղինակած այլ թեկնածու(ներ)ի առկայության դեպքում դիտարկվում է միայն մեկ թեկնածու՝ համահեղինակների գրավոր համաձայնությամբ:

30. Հանձնաժողովի անդամները Հայտով ներկայացված տվյալների հիման վրա գնահատում են թեկնածուների գիտատեխնոլոգիական գործունեության արդյունավետությունն սույն կարգի Հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան:

31. Սույն կարգի Հավելվածի 8-րդ կետի գնահատման նպատակով թեկնածուները Հանձնաժողովին բանավոր զեկույցով ներկայացնում են իրենց գիտատեխնոլոգիական գործունեության հիմնական արդյունքները: Օբյեկտիվ պատճառներով նիստին անձամբ ներկա չլինելու դեպքում թեկնածուի ինքնաներկայացումը կարող է կազմակերպվել հեռավար:

32. Յուրաքանչյուր թեկնածուի համար սույն կարգի Հավելվածի 8-րդ կետի միավորը (առավելագույնը 30 միավոր) ձևավորվում է նիստին ներկա Հանձնաժողովի անդամների գնահատականների մաթեմատիկական միջին թվաբանականի հիման վրա:

33. Քննարկումից հետո Հանձնաժողովը յուրաքանչյուր թեկնածուի համար կայացնում է որոշում երաշխավորելու կամ չերաշխավորելու մասին՝ հաշվի առնելով հավաքած

միավորների չափը և թեկնածուի համապատասխանությունն ակադեմիական ազնվության ու վարվեցողության սկզբունքներին: Հանձնաժողովի որոշումը հաստատվում է բաց քվեարկությամբ:

34. Ասոցացված անդամի երաշխավորության քվեարկելու իրավունք ունեն Հանձնաժողովի բոլոր անդամները:

35. Ասոցացված անդամի թեկնածուն ընտրության համար երաշխավորված է համարվում, եթե ստացել է նիստի մասնակիցների պարզ մեծամասնության քվեն:

36. Բաժանմունքի ղեկավարը Հանձնաժողովի նիստի արձանագրությունը ընտրություններից հինգ աշխատանքային օր առաջ հանձնում է Ակադեմիկոս քարտուղարին:

37. Հանձնաժողովների նիստերի արձանագրությունների հիման վրա, Աշխատանքային խումբը գիտատեխնոլոգիական գործունեության արդյունավետության ցուցանիշի (սույն կարգի Հավելված) նվազման կարգով ձևավորում է թեկնածուների վարկանիշային ցուցակը՝ ըստ մասնագիտությունների:

38. Ասոցացված անդամների Ակադեմիայի ընդհանուր ժողովում ընտրությունների գործընթացը կազմակերպում է Ակադեմիկոս քարտուղարը:

39. Ընդհանուր ժողովում Ասոցացված անդամ ընտրելու իրավունք ունեն ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամները: Ընդհանուր ժողովում քվեարկողների ցուցակային կազմը հաստատում է Ընդհանուր ժողովը:

40. Ընդհանուր ժողովում Բաժանմունքների ղեկավարները ներկայացնում են Հանձնաժողովների եզրակացությունները, որից հետո Ակադեմիկոս քարտուղարը ներկայացնում է Աշխատանքային խմբի կազմած թեկնածուների վարկանիշային ցուցակը՝ ըստ մասնագիտությունների:

41. Ընդհանուր ժողովն ընտրում է հաշվիչ հանձնաժողով, որից հետո, բաց քվեարկությամբ անցկացվում են ըստ մասնագիտությունների կազմված վարկանիշային ցուցակում ընդգրկված Ասոցացված անդամի թեկնածուների անվանական ընտրություններ:

42. Ընդհանուր ժողովն իրավազոր է անցկացնել Ասոցացված անդամների ընտրություններ, եթե քվեարկությանը մասնակցում են Ակադեմիայի իսկական և թղթակից անդամների ցուցակային կազմի կեսից ավելին:

43. Ասոցացված անդամի թեկնածուների վարկանիշային ցուցակում ներառված անձը համարվում է ընտրված, եթե ստացել է ընտրողների ցուցակային կազմի 2/3-ի քվե:

44. Ընդհանուր ժողովը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը՝ բաց քվեարկությամբ:

45. Ընտրության արդյունքները կարող են բողոքարկվել, եթե բողոքը վերաբերում է ընտրությունների ընթացակարգային խախտումներին կամ փորձագիտական գնահատման սխալներին: Բողոքները ներկայացվում են ակադեմիայի նախագահությանը՝ ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքները քննարկվում են 10 աշխատանքային օրվա ընթացքում: Քննարկման արդյունքներով ընդունվում է որոշում՝ նախագահության նիստերի կազմակերպման ընթացակարգով:

46. Ընտրությունների վերջնական արդյունքները Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատումից հետո հրապարակվում են Ակադեմիայի պաշտոնական կայքում:

4. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

47. Ակադեմիայի արտասահմանյան անդամների ընտրություններն անցկացվում են Ասոցացված անդամների ընտրությունների հետ միաժամանակ:

48. Ակադեմիայի արտասահմանյան անդամների թեկնածուներն առաջադրվում են Բաժանմունքների կողմից և երաշխավորվում են Հանձնաժողովների որոշմամբ:

49. Ակադեմիայի արտասահմանյան անդամի թեկնածուի առաջադրման փաստաթղթերի փաթեթը պետք է ներառի՝

- 1) թեկնածուի գրավոր համաձայնությունը,
- 2) առաջադրողի կողմից թեկնածության հիմնավորումը,
- 3) թեկնածուի կենսագրությունը (CV),

4) գիտական աշխատությունների ցանկը (նշելով Սկոպուս (Scopus) ՄԳՇ-ում Հիրշի գործակիցը, հայաստանյան գիտնականների հետ համատեղ հրատարակությունները),

5) հրապարակային պաշտպանություն անցած երեք ատենախոսությունների ղեկավարման մասին հիմնավորող փաստաթղթերը, նշելով հայաստանյան գիտնականների հետ համատեղ ղեկավարած ատենախոսությունները (*առկայության դեպքում*),

6) թեկնածուի ղեկավարմամբ կատարված/կատարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերի անվանումները, կազմակերպությունը, ֆինանսավորման չափը՝ նշելով հայաստանյան գիտնականների մասնակցությամբ ծրագրերը,

7) տեղեկատվություն հայաստանյան գիտնականների հետ իրականացված/իրականացվող համատեղ գիտական, ինովացիոն ու ներդրումային ծրագրերի մասին:

50. Թեկնածուների փաստաթղթերի փաթեթը Հանձնաժողովին ներկայացնում է Բաժանմունքի ղեկավարը:

51. Արտասահմանյան անդամի երաշխավորության քվեարկելու իրավունք ունեն Հանձնաժողովի բոլոր անդամերը:

52. Թեկնածուները երաշխավորվում են բաց քվեարկությամբ, նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

53. Ընդհանուր ժողովում Ակադեմիկոս քարտուղարը ներկայացնում է Ակադեմիայի արտասահմանյան անդամների թեկնածուների վերաբերյալ Հանձնաժողովների եզրակացությունները, դրանց հիման վրա ընտրությունների համար երաշխավորված թեկնածուների ցուցակը՝ ըստ մասնագիտությունների:

54. Ընտրություններն անցկացվում են թեկնածուների ցուցակային կազմով, բաց քվեարկությամբ:

55. Ակադեմիայի արտասահմանյան անդամների թեկնածուների ցուցակում ներառված անձը համարվում է ընտրված, եթե ստացել է ընտրողների ցուցակային կազմի պարզ մեծամասնության քվեն:

56. Ընտրությունների վերջնական արդյունքները հրապարակվում են Ակադեմիայի պաշտոնական կայքում:

**ԱՍՈՑԻԱՑՎԱԾ ԱՆԴԱՄԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Հ/հ	Չափանիշ	Ցուցանիշ (գնահատական)
1.	Սկոպուս (Scopus՝ (https://www.scopus.com/freelookup/form/author.uri) գիտատեղեկատվական հարթակում Հիրշի գործակից (h-index):	$E_1 = \begin{cases} h, & h < 30 \\ 30 & h > 30 \end{cases}$
2.	Գիտաշխատողի աշխատանքներին «Scopus» միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում հղումների քանակը – K:	$E_2 = \begin{cases} \sqrt{K}, & K < 900 \\ 30, & K > 900 \end{cases}$
3.	2017-2026 թվականների ընթացքում գիտական պարբերականներում տպագրված հոդվածների թիվը, որտեղ յուրաքանչյուր հոդվածի համար՝ N - համահեղինակների ընդհանուր թվաքանակ, F - SCImago Journal & Country Rank պորտալի ամսագրերի դասակարգման քառորդ՝ տպագրման տարվա դրությամբ. Q1՝ F = 4, Q2՝ F = 3, Q3՝ F = 2, Q4՝ F = 1, SCImago Journal & Country Rank պորտալում չներառված, ԱԳ ունեցող (ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)») պարբերականի դեպքում. F = 0.5, SCImago Journal & Country Rank պորտալում չներառված, ԱԳ չունեցող (ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»), բայց գրախոսվող պարբերականում գիտական հրապարակման դեպքում՝ A _i , A _i = հոդվածների թիվ*0,2 միավոր, բայց ոչ ավել քան գումարային 2 միավոր:	$E_3 = \sum F * \frac{1}{N} + A_i$
4.	2017-2026 թվականների ընթացքում մենագրությունների թիվը, որտեղ յուրաքանչյուր Մենագրության համար՝ N - համահեղինակների ընդհանուր թվաքանակ, B = 1, P _{SH} - ծավալը (տպագրական մամուլ) Գիտական հրապարակումների, գրքերի, նյութերի ժողովածուների հրապարակումների (գիտական կազմակերպության կամ բուհի գիտխորհրդի երաշխավորություն ունեցող, մեկ գիտական թեմայի նվիրված, գիտական հանրության համար նախատեսված, առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ և «ISBN» ունեցող հրապարակում) դեպքում A ₂ ,	$E_4 = \sum B \frac{P_{SH}}{N} + A_2$

	$A2 = \sum 0.2 \frac{P_{SH}}{N}$, բայց ոչ ավել քան գումարային 2 միավոր:	
5.	2017-2026 թվականների ընթացքում ստացված արտոնագրերի թիվը, որտեղ յուրաքանչյուր արտոնագրի համար՝ WIPO Global Innovation Index-ի դասակարգմամբ առաջին 20 երկրներում գրանցված լինելու դեպքում՝ $Pt = 2.0$, այլ երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում գրանցված լինելու դեպքում՝ $Pt = 0.2$, N - համահեղինակների ընդհանուր թվաքանակ:	$E_5 = \sum \frac{Pt}{N}$
6.	Ղեկավարած պաշտպանած թեկնածուական ատենախոսությունների թիվը՝ PhD , որտեղ N - համաղեկավարների թիվն է:	$E_6 = \sum \frac{PhD}{N}$ $E_6 =$ առավելագույն 30
7.	Գիտությունների դոկտորի աստիճանի առկայության դեպքում, որտեղ $h_{25նային}$ - տվյալ մասնագիտությամբ Հիրշի գործակցի շեմային արժեքն է (սույն կարգի 13-րդ կետի 8-րդ ենթակետում նշված առանց տարիքային սահմանափակման արժեքները):	$E_7 = 0.25 * h_{25նային}$
8.	Գիտական մշակումների ներդրումը հաստատող փաստաթղթերը (ներկայացնել տնտեսական, լիցենզավորման և մատակարարման պայմանագրեր, փորձարկումների ակտեր, ապրանքի նույնականացման հավաստագրեր, տնտեսագիտական փաստաթղթեր):	$E_8 \leq 30$ գնահատվում է 0-ից 30 սանդղակով հայտերի վերլուծության ու գնահատման մասնագիտական հանձնաժողովի կողմից՝ թեկնածուի ինքնաներկայացման փաստաթղթերի և ելույթի հիման վրա
	Նոր գիտական (ենթա)ուղղության հիմնադրումը, բազային գիտական խմբի ղեկավարման փորձը:	
	Բարձր վարկանիշով գիտական ամսագրերում գրախոսությունները (ներկայացնել հաստատող փաստաթղթեր):	
	Ստացած դրամաշնորհները, պետական և ծանրակշիռ միջազգային մրցանակները:	
	Գիտության հանրայնացմանն ուղղված գործունեությունը, գիտամանկավարժական գործունեությունը և այլն:	
Գիտատեխնոլոգիական գործունեության արդյունավետության ցուցանիշ (գնահատական) - E		$E = \sum_{i=1}^8 E_i$